# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և**
**Շաղվիո Շավանիո քաղաքի (Ֆրանսիայի Հանրապետություն)**
**միջև**

Հաշվի առնելով Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Շաղվիո Շավանիո քաղաքի (Ֆրանսիայի Հանրապետություն) միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը,

առաջնորդվելով Էջմիածին և Շաղվիո Շավանիո քաղաքների միջև հարաբերությունները շարունակելու և զարգացնելու ձգտումով՝ Հայաստանի և Ֆրանսիայի միջև ընկերական հարաբերությունների ամրապնդման շահերից ելնելով,

Էջմիածին քաղաքը (Հայաստանի Հանրապետություն) և Շաղվիո Շավանիո քաղաքը (Ֆրանսիայի Հանրապետություն), կնքում են սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

- Կողմերը նպատակ ունեն զարգացնել համագործակցություն հետևյալ բնագավառներում՝
  Մշակույթ, կրթություն և գիտություն, բնակչության սոցիալական ապահովություն, առողջապահություն, տեղական կառավարում, էկոլոգիա, էկոնոմիկա և ներդրումային գործունեություն, քաղաքային տնտեսություն, սպորտ, տուրիզմ, տեղեկատվական տեխնոլոգիաներ:
- Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական, կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում ուղիղ կապեր հաստատելու գործում:
- Համագործակցության կոնկրետ ծրագրեր համաձայնեցնել և հաստատել կանոնավոր կերպով նամակներ փոխանակելու միջոցով, որից կբխի համապատասխան պայմանագրի կնքումը:
- Իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխայցեր և կապեր պաշտոնական ներկայացուցիչների միջև:
- Իրականացնել Էջմիածին և Շաղվիո Շավանիո քաղաքների բնակչության կյանքի և երկու պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվության փոխանակում:
- Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարար անձանց պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:

- Պարբերաբար անցկացնել տվյալ հուշագրի կատարման մոնիտորինգ՝ փոխադարձ նամակագրության կամ անձնական հանդիպումների միջոցով:
- Սույն հուշագիրը հիմք է հանդիսանում հետագայում համապատասխան պայմանագիր կնքելու համար: Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Հուշագրի տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերի գրավոր համաձայնությամբ մինչև պայմանագրի կնքումը: Յուրաքանչյուր կողմը իրավունք ունի դադարեցնել հուշագիրը՝ մյուս կողմին առնվազն վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելու միջոցով:
- Հուշագիրը կազմված է հայերենով և ֆրանսերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ստորագրված է Էջմիածին քաղաքում 2015թ. հոկտեմբերի 8-ին:

| Էջմիածին քաղաքի կողմից՝ | Շաղվիլ Շավանիլ քաղաքի կողմից՝ |
|---|---|
| Էջմիածնի քաղաքապետ | Շաղվիլ Շավանիլի քաղաքապետ |
| Կարեն Գրիգորյան | Ժերար Դեգամբ |

**MÉMORENDUM DE COOPÉRATION**
**Entre les villes d'Etchmiadzine (République d'Arménie) et de Charvieu-Chavagneux (République Française)**

Vu la tentative de faire développer des liens d'amitié mutuellement avantageux entre la ville d'Etchmiadzine (République d'Arménie) et la ville de Charvieu-Chavagneux 'République Française),

Tenant en consdération les espérances de poursuivre et encore plus de développer les relations amicales entre la ville d'Etchmiadzine (République d'Arménie) et la ville de Charvieu-Chavagneux (République Française),

La ville d'Etchmiadzine (République d'Arménie) et la ville de Charvieu-Chavagneux (République Française) signent le Mémorendum de Coopération ci-présent sur le suivant:

- Les parties poursuivent le but de développer la coopération dans les domaines suivants: Culture, Sciences et Education, Assurance sociale, Santé, Gestion locale, Ecologie, Economie et Investissements, Economie urbaine, Sport, Tourisme, Technologies d'Information.
- Contribuer et faire développer l'établissement des liens directs dans divers domaines d'activités entre les spécialists et les entreprises, les sociétés civiles et les organisations publiques des deux villes.
- Etablir des programmes précis de coopération au moyen d'une correspondance régulière qui donnera lieu à la signature du contrat plus concret.
- Etablir des liens et réaliser des visites mutuelles des délégations entre les représentants officiels.
- Echanger de l'information sur les activités des pouvoirs locaux des deux Etats, mais aussi sur la vie de la population des villes d'Etchmiadzine et de Charvieu-Chavagneux.
- Contribuer et développer des relations commerciales mutuellement profitables, favoriser l'échange des visites des hommes d'affaires et l'établissement des relations économique mutuellement avantageuses.

- Réaliser de temps à autre un monitoring de l'accomplissement du Mémorendum ci-présent au moyen d'une correspondance réciproque ou des rencontres personnelles.
- Le Mémorendum suivant sert de base pour la signature d'un Accord de Coopération dans l'avenir. Le Mémorendum entre en vigueur dès le jour de la signature. Les amendements et les annexes dans le Mémorendum se réalisent uniquement avec l'accord écrit mutuel des deux parties avant la signature du Contrat. Toute partie a le droit d'arrêter le Mémorendum en l'informant l'autre partie par écrit au moins six mois avant .
- L'accord est fait en arménien et en français, tous les deux textes ont une valeur juridique égale.

Signé dans la ville d'Etchmiadzine le 8 Octobre 2015.

| Ville d'Etchmiadzine | Ville de Charvieu-Chavagneux |
|---|---|
| Maire d'Etchmiadzine<br>Karen Grigoryan | Maire de Charvieu-Chavagneux<br>Gérard Dézemptee |